



BUREAU DU PRIMAT, DIOCESE DE FRANCE DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE Առաջնորդարան Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու, Paris - Փարիզ

28 FEVRIER 2019 – N° 4 (Vol. 6)

28 Փետրուար 2019 – N°4 (Հատոր 6)

ՄԵԻ ՄԻՍԵՔ՝ ՄԵՃ ՊԱՅՔԻ ԱՄԵԼԱՄԵՏՅ ՅՈՎԵՈՐ ՃԱՓՈՐՈՒԹԵԱՆ



Ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու օրացոյցին, այս կիրակի Փուն Բարեկենդան Է. այսինքն դեպի Մեծ Պահքի օրհնուած շրջանը առաջնորդող կիրակին: Մեծ Պահքը 40 օրուայ շրջան մըն է որ կը սկսի Փուն Բարեկենդանին յաջորդող երկուշաբթին եւ կը վերջանայ Ծաղկազարդի կիրակին: Մեծ Պահքը տարբեր մարգարէներու եւ աստուածաշունչի մէջ կը շրջուի անձերու մեկուսացման եւ ծոմապահութեան, ինչպէս նաեւ մեր Տիրոջ կատարած 40 օրուայ ծոմապահութեան օրհնակներուն վրայ հիմնուած է: Մեծ Պահքը երէք սկզբունքներ ունի՝ աղօթք, ծոմապահութիւն եւ բարեգործութիւն: Թէեւ այս երէք տարրերը քրիստոնէական կեանքի մէջ մասն են, բայց Մեծ Պահքի ընթացքին մենք մեր ուշադրութիւնը ալ աւելի կը կեդրոնացնենք ասոնց վրայ: Աղօթքին մէջ կեդրոնաւարը մեզի կ'օգնէ որ աւելի լաւ հաղորդակցիմք Աստուծոյ հետ եւ զգանք իր ներկայութիւնը: Ծոմապահութիւնը կ'օգնէ մեզի որ կրթենք մեր մարմինը եւ մարմնական ցանկութիւններէն հեռու պահենք: Վերջապէս, բարեգործութիւնը մեր հաւատքը գործադրելու հիմնական ուղիներէն մեկն է: Ինչ կը նշանակէ յայտարարել, որ մենք Քրիստոսին կը հաւատանք, երբ իրականութեան մէջ մենք չենք ընէր ինչ որ ան մեզմէ կը պահանջէ: Հիմա որ Մեծ Պահքը կը մօտենայ, այս ամենամեայ հոգեւոր ճամփորդութեան ընթացքին եկէք միասնաբար Հայ Եկեղեցոյն եւ միլիոնաւոր Քրիստոնէաներուն Մեծ Պահքին՝ Ծրագրելով մեր ամենօրեայ աղօթքի եւ ծոմ պահելու ձեւը ու բարեգործութեան միջոց մը ընտրելով:

2019-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱՌՍՈՒՆԻ ԱՍՅԱՆԱՓԱԿ ԹԻՌՎ ՍԵՂԱՆԻԿՆԵՐ (STANDS) ՏՐԱՍԱԴԵԼԻ ԵՆ



Թեմական խորհուրդը Պրն. Ալպրիք Տեր Պօղոսեանը 2019-ի փառատօնին համակարգող, իսկ Սոնա Ադամեանը եւ Սիմոն Սիմոնեանը փառատօնի յանձնախումբի մէջ թեմական խորհրդի ներկայացուցիչներ նշանակեց: Ծաբաթ, Փետրուար 23-ին, խումբը Գրգշտրի Վահան Եպս. Յովհաննիսեանի նախագահութեամբ, եկեղեցու տիկնանց յանձնախումբի անդամներու եւ թեմական երիտասարդական միութեան վարչութեան անդամներու հետ հանդիպում մը ունեցաւ: Փարիզի, Ալֆորվիլի, Իսի-ԼԷ-Մուլինոյի, Արնուվիլի եւ Ծաւիլի ծուխերու ատենապետները եւ ծխական քահանաները եւս հանդիպման հրաւիրուած էին: Ժողովը տեղաւորման ծրագրի մանրամասնութիւնները, անվտանգութեան հարցերը եւ օրուայ ծրագիրը քննարկեց: Ուրախ ենք յայտարարելու, որ այդ օրուայ ընթացքին հայկական կազմակերպութիւններու եւ ընկերութիւններու վարձելու համար 20 տաղաւարներ պիտի տրամադրուին: Տաղաւար մը վարձել փափաքողները կրնան [festival@diocesearmenien.fr](mailto:festival@diocesearmenien.fr) հասցէին գրել, կամ Պրն. Ալպրիք Տեր Պօղոսեանին հեռաձայնել՝ 06 75 62 17 40: Վարձելու գինը գործերու եւ ընկերութիւններու համար՝ 250 Եւրօ, հայկական կազմակերպութիւններու համար՝ 150 Եւրօ է:

ՄԱՐՄԻԼԻՅՑ ՍԵՆ ԺԵՐՈՍ ԾՈՒԻՆ ՍԵՃ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԻ ՁԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ



Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեան, Ծաբաթ 16 Փետրուարին, Մարսիլիոյ ՍԵՆ ԺԵՐՈՄԻ Սուրբ Սահակ Եւ Սուրբ Մեսրոպ եկեղեցույ մէջ պատարագեց մասնակցութեամբ ծխատեր քահանայ Տեր Գառնիկ Կարապետեանի: Ծխատեր քահանայի եւ ծխական խորհուրդի դիմումին ընդառաջելով՝ Պատարագէն վերջ սրբազանը կիսասարկաւազ ձեռնադրեց Էտուար Եալըչը: Պատարագէն վերջ, ծխատեր քահանայի եւ ծխական խորհուրդի դիմումին ընդառաջելով սրբազանը կիսասարկաւազ ձեռնադրեց Էտուար Եալըչը: Արարողութենէ վերջ Առաջնորդը նոր ձեռնադրուած կիսասարկաւազը, իր ընտանիքը եւ ծուխը շնորհաւորեց: Եկեղեցույ սրահին մէջ տեղի ունեցած ընդունելութեան ընթացքին, ծխական խորհրդի նախագահ Պրն. Մաքսիմ Սիվապետեան ողջունեց բոլորին եւ շնորհակալութիւն յայտնեց Վահան Սրբազանին Սեն Ժերոմի համայնք կատարած իր այցելութեան համար: Արարողութեան ներկայ էին նաեւ՝ Տեր Արամ Ղազարեան(Փրատօ), Տեր Արշէն Սովսետեան (Պօմոն) եւ Տեր Կոմիտաս Տիգրանեանը (ՍԷՆ ԼՈՒ): Կը շնորհաւորենք բոլորը: [Պատկերներու համար սխմել այստեղ:](#)

ԱՐԵԱՆ ԼՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅՈՑ ՅԵՐԱՊՈՒՆՈՒԹԵԱՆ ՉՈՐԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՍԱՐ



Արդէն 104 տարի է որ հայ տղամարդիկ, կիներ, մանուկներ հալածուեցան ու չարդուեցան: 1915-ի Տեղասպանութեան ընթացքին զոհուած 1.500.000 հայերու յիշատակին, Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցույ, Եկեղեցատէր Երիտասարդաց կազմակերպութեան անդամները, Գերաշնորհ Վահան Եպիսկոպոս Յովհաննեսեանի հովանիին տակ "Կեանքի Լուր" արեան նուիրատուութիւն կը կազմակերպեն: Այս առաքելութիւնը Ֆրանսայի Հայ Առաքելական Եկեղեցույ 25 ծուխերու մէջ միաժամանակ տեղի պիտի ունենայ: Աւելի քան մէկ դար առաջ, հայ ժողովուրդը դեպի մահ քալելու ատեն արիւն կը կորսնցնէր, անոնց սուրբ հիշատակին մենք որոշեցինք մեր արիւնը անոր կարիքը ունեցողներուն նուիրելով ուրիշին կեանքի յոյս տալ: Ինչպէս որ Աստուածաշունչը մեզի կը սորվեցնէ, "Չարիքին չարիքով մի՛ պատասխանէք (Հռոմեացիներ 12.17):" Այս արշաւին մասնակցիլ փափաքողներէն կը խնդրենք, որ արեան նուիրատու դառնալու համար պէտք եղած պայմանները սորուելու եւ յաւելեալ տեղեկութիւններու համար մեզի հետ [jeunesse@diocesearmenien.fr](mailto:jeunesse@diocesearmenien.fr) հասցէով կապ հաստատեն: Այս տեղեկատուութիւնը պէտք է կարելի եղածին չափ լայն տարածել:

ՓՐԱՏՈՅԻ ՄԵՃ ԱՄԱՆԱԿԱՆ "ՏՐԻԴԵՆՑ"



Ծաբաթ 16 Փետրուարի երեկոյեան, Գերաշնորհ Վահան Սրբազան Յովհաննեսեան, Առաջնորդ, այցելեց Մարսիլիոյ Փրատօ տաճարը, մասնակցելու Տիրոջ Տաճար ներկայացման Տօնին: Տեր Արամ Ղազարեանի եւ խորանի սպասաւորներու աջակցութեամբ կատարուած արարողութենէ վերջ, Սրբազան Հայրը Սիմէոն ծերունիի խօսքերուն մասին քարոզեց: Աւելի վերջ հաւատացեալները որոնք տաճարը լեցուցած էին դուրս ելան, ուր Վահանը Սրբազան կրակը վառեց: Հացահատիկից հետո Հաւատացեալները հայկական աւանդութեան համաձայն կրակի վրայէն սկսան ցատկել: Այս այցելութիւնը Առաջնորդ Սրբազանին համար, արարողութեան ներկայ եղող ծխական խորհուրդի անդամներու եւ պատուիրակներու հետ հանդիպելու առիթ մըն ալ եղաւ: Արարողութեան ներկայ էին նաեւ՝ Տեր Գառնիկ Կարապետեանի (ՍԷՆ ԺԵՐՈՄԻ), Տեր Արշէն Սովսետեան (Պօմոն) եւ Տեր Կոմիտաս Տիգրանեանը (ՍԷՆ ԼՈՒ): [Պատկերներու համար սխմել այստեղ:](#)

ՀԱՅ ԼԵՉՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՍՏՈՒԱՅԻՆ ԽՍՏՏԵԱՆ ԴԱՍԵՆՔՍԵ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԵՃ - 34. ՏԱՐԻ:



Վենետիկի Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան կազմակերպած Հայ լեզուի եւ մշակոյթի ամառնային խտացեալ դասընթացքը տեղի պիտի ունենայ Յուլիս 30 — Օգոստոս 14 թուականներուն: Քննութիւնները Օգոստոս 14-ին կ'եսորէ վերջ: Ժամանում Յուլիս 29-ին, մեկնում Օգոստոս 15-16-ին: Դասընթացքը ունի չորս մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ: Դասերը տեղի կ'ունենան երկուշաբթի Ծաբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասընթացքի ամբողջական տեւողութիւնն է 65 դասաժամ: Դիմումները պէտք է կատարուին ԱՆՁԱՄԲ ԵՒ ԳՐԱԴՐՈՐ, նշելով միշտ ՀԵՌԱՄՍԻԹԻ թիւ մը եւ ԵԼԳՐԱՅԻՆ (EM) հասցէ մը: Դասընթացքին զուգահեռ տեղի պիտի ունենան մշակութային այլեայլ ձեռնարկներ: փափաքողներուն, կ'եսորէ վերջերը, անվճար պիտի աւանդուին նաեւ՝ դուրուկի, հայկական պարերու եւ հայկական խոհանոցի դասեր: Յաւելեալ տեղեկութիւններու համար ելգիր մը ուղարկել հետեւեալ հասցէներուն՝ [daniela@padus-araxes.com](mailto:daniela@padus-araxes.com); [benedettacon@gmail.com](mailto:benedettacon@gmail.com): Ի հարկին հեռաձայնել բջջային թիւերուն՝ +39.347.4562981 եւ +39.349.0986027 երկուշաբթի եւ Հինգշաբթի առաւօտները, եւ կամ երէքշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 20.00–21.30 (իտալիոյ ժամով), նաեւ՝ [սխմել այստեղ](#) եւ [սխմել այստեղ](#):

ԽՈՐԱՆԵՆ ԲԱՆԱԿ



Առաջնորդի գրասենեակը գոհունակութեամբ կը յայտարարէ, որ խորանի ծառայող Սեւան Եօզթուրը կամաւորապէս Հայաստանի բանակին միացած է: Երբ իրեն կը հարցուի, թէ ինչու կը լքէ իր տունը, դպրոցը եւ եկեղեցին, Սեւանը պատասխանեց. «Արցախի մեր սահմանները եւ մեր եկեղեցիները պաշտպանելու համար»: Ան հպարտութեամբ որոշեց իրականացնել այս պաշտօնը, որ կը համարէ «իրաքանչիւր ազնիւ հայու երազանքը իր ժողովրդի եւ եկեղեցույ համար»: Ֆրանսա ծնած եւ 21 տարեկան այս երիտասարդը Սորբոն համալսարանի Master Electrotechnique-ի ուսանող է: Ծառայելով իր եկեղեցույ եւ իր երկրին, ան կը յուսայ Ֆրանսայի մեր հայ երիտասարդութեան օրինակ ըլլալ: Անոր եղբայրը Սեւակ Եօզթուրը Փարիզի մեր հայկական եկեղեցույ մէջ կը շարունակէ ծառայել: Մենք կ'աղօթենք, որ մեր Տէրը՝ Ֆրանսայի, Հայաստանի եւ ամբողջ աշխարհի մէջ, Տիրոջ եւ հայրենիքին ծառայող մեր երիտասարդները օրինէ եւ պաշտպանէ:

bureauduprimat@diocesearmenien